

ՏԱՍՆԵՐՈՐԻՒ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրություն մեջ:

Ստամբուլում գրվում են միմյանի նմանագրություն մեջ:
Тифлис. Редакция «Менк»

Կնիքը տարածվում է 10—2 մամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարություն ընդունվում է ամեն լիցիտով:

Յայտարարությունների համար գնարժեքը կես
խաչապանի քառույթ 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ս. Պետեր-
բուրգից: Նամակ Վերին-Ալտուրից: Նամակ
Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Անգլիա,
Շվեյց և Եվրոպայի մյուս մասեր: Նամակ Պարսկաստանից:
—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: —ՊԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մատենագրություն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յուլիսի 28

Մի քանի շաբաթ դրանից առաջ, ձեր պատու-
ական լրագրին՝ Ս. Պետերբուրգից լուր էին հա-
ղորդել, որ իբր թէ տեղույս հայ հարուստներից
մինը H. Kiepert-ին ապագային է Հայաստանի
քարտեզը այս լուրը միանգամայն անհիմն է:
Իմ պատուելի բարեկամ պ. Ս. Ս... Գերմանիայի
Misdroy Bad-ից ինձ գրում է, թէ նա հանքա-
յին չբերում ինքն անձամբ պատե՛լ է ունեցել
այնպիսի պատկանելի գերմանացի ուսումնա-
կան Kiepert-ին և հարցրել է նրանից, ճշմարիտ
է արդե՞ք, որ նա պատրաստում է Հայաստանի
քարտեզի նրատարակությունը: Ասումնակարճ
պատասխանել է թէ Ս. Պետերբուրգից ոչ ոք
նրան բան չէ ապագային այդպիսի մի քարտեզի
մասին. բայց Վենետիկի Միսիսթրան միաբա-
նակության արքան՝ հայկարան Վ. Ալեքսանդրա-
միցս գիմել է նրան այս առաջարկությունը և
ինքն Kiepert դժուարացել է մինչև այժմ ի-
րագործելու հայր Ալեքսանդրի առաջարկությունը
նախ, որ շատ զբաղված է զանազան կողմերից
իրան ապագայում այնպիսի գերմանացի քարտեզի-
րի նրատարակությունը, երկրորդ, երրորդ և չոր-
րորդ հայտարարությունները գեո. մասնագետներն
ուսումնասիրել Հայաստանի տարածքը և պարսից
խնամությունների ներքոյ գտնվող երկրները, իսկ
առ ձեռն պատրաստ անդեղությունները տակա-
ւին թերի են և Տերիք չեն Հայաստանի քար-
տեզի նրատարակությունը ձեռնարկելու համար:
Բայցի դրանից, պ. կիպերտը առաջարկել է թէ
նա երկու տարուց յետոյ մտադիր է շարունա-

կելու հայոց լեռնի ուսումնասիրությունը և քա-
ղաքայն է, որ այդքան ժամանակամիջոցում, գու-
ցե, իր ստացած տեղեկությունները Հայաստանի
մասին ևս առաւել կը ձեռնարկեն ու այնուհետև
հեշտ կը լինի ձեռնամուկ լինելը գործին: Իմ
մտերիմ բարեկամս երկուսոյ նամակը ինձ ա-
ռիթ է տալիս մի քանի խորհրդածություններ
անելու. պ. կիպերտի խօսքերից յետոյ, ահա՜ այս
հարց է ծագում թէ ուսուց, տաճկաց և պար-
սից հպատակ հայերի դպրոցներում հազարավոր
մանուկները որպիսի քարտեզների միջնորդու-
թեամբ ուսումնասիրում են Հայաստանի հին և
նոր աշխարհագրությունը. տարակողս չը կայ, որ
Վենետիկում լայն ընձայված քարտեզները նշա-
նաւոր ծառայություն չեն կարող մատուցանել
մեր ուսումնասիրներին, ուրեմն, հարկը պա-
հանջում է անպակով վերաճնել այս թերու-
թիւնը, ապա թէ ոչ, շատ դժուար է հայոց պատ-
մութեան դաստաւածությունը առանց լա. քարտեզի
ուղեկցութեան: Մենք հայերս սովոր ենք երկու
միջոց պատրաստ պաշար ընդունել անգլիացուց,
ֆրանսիացուց և գերմանացուց գիտնականներից,
որոնք, անցեալ դարերից սկսեալ, անդադար
մշակում են մեր գրականութիւնը, իրանց կրի-
տիկական յղուածներով մեկնում են մեր հին
հեղինակների երկատրուքները, չը շատանալով
գրանով, նոքա չեն հրժարվում, մինչև անգամ,
նպատակ հայոց ազգի վերաճութեան. Անս պ.
Կիպերտին հայկական դատը արժանաւոր համար
Եւրոպայում, մի քանիք է հիմնում ֆորթիլիտե-
պ. կիպերտը ժամանակով Հայաստանի քարտեզն
է ցանկանում հրատարակել ի պես մեր ու-
սումնասիրներին. միթէ եւրոպացուց այսքան
համակրութիւնից յետոյ էլ մեր ազգը ձեռքեր
կուրծքին ծայած պիտի յարատէ՛ն անյարժու-
թեան մէջ կամ ընթանայ կրիպի քայլերով:
Յանկալի էր լինէր, որ Վ. Պոյսյ Միացեալ ըն-
կերութիւնները վարժապետներ ուղարկելով Հա-
յաստանում և կրիկայում հիմնած դպրոցնե-
րին, պատուէրէին սոյն վարժապետներին ու-
սումնասիրել իրանց յաճախելիք երկրները ա-
մենայն կողմանէ. թող մեր տաճկացեալ եղբայր-
ները օրինակ առնեն եւրոպացի պաշտօնեանե-
րից: Անգլիացուց փոխ-հիւպատոսը Վանում պ.
կէյստը իր պաշտօնից գատ, յանձնարարու-

թիւն ունի նաև հագնապան հետազոտութիւն-
ներ անել Հայաստանում և անուս է միջոց: Միա-
ցեալ ընկերութեան վարժապետների անդեղու-
թիւնները շատ նպատակաւ և անհրաժեշտ են
կիպերտի համար: Ա՛ր ես մեր ֆրանսիական-
ները. միթէ ամենայն բարի ձեռնարկութիւն
անհատական սկզբունքի արդարեւ պիտի լինի
մեր մէջ:
Խ. Կնիքարարան
ՆԱՍԱԿ ՎԵՐԻՆ-ԱՌՈՒՐԻՍԻՑ
Յուլիսի 23-ին
Անցնելով Ալտուրի և նրա շրջակայ գիւղերի
փողոցներով, դուք կը տեսնէք շատ սնունդ, որոնց
դուները ճակատին խփած տարիտակի կտորի վրա
գրած է «ФРУКТО—ВОДОЧНЫЙ ЗАВОДЪ»:
Այսպիսի գործարանների թիւը գուցէ 100—
200-ի հասնի: Այժմ տեսնե՞ք թէ այդ գործա-
րանները որտեղից են առել իրանց սկիզբը: Ա-
ռաջ Ալտուրում և իր շրջակայ մի քանի հայա-
բնակ գիւղերում, քանի որ դեռ անցելի կառա-
վարութիւնը չէր սկսել իր գործունէութիւնը, իւ-
րանցից մի կտորը, որ կախարիչ (ղափաղ) է կոչ-
վում, գործ էր անվում միայն օդի պատրաստե-
լու ժամանակ, իսկ միւսը, որ մեծ կաթնայն է,
նոյնպէս իւրաքանչիւր օր գործ էր անվում. նա
անհրաժեշտ կարասի էր գիւղացու տան մէջ:
Նրանով գիւղացին ջուր էր տալանում լուացքի
ու հացի համար, կերակուր էր պատրաստում
հարսանիքի և ուրիշ այդպիսի զէպքերում, երբ
բազմութիւն պէտք է կերակուրէր, միւս էր տապա-
կում ձմեռուայ համար (գաւրում) և այլն: Իսկ
ամառը թըլթի ժամանակ այդ երկու ամաններով
օդի էր պատրաստում իր տանը գործածելու հա-
մար: Իր տանը առաջի, որովհետև Ալտուրում
և իր շրջակայքում շատ քիչ տուն կը գտնվի որ
15 ծառից աւելի թիթենի ունենայ: Իսկ ան 15
ծառ թիթենի էլ գիւղացին միայն օդի չէ պատ-
րաստում, այլ մի մասը չորացնում է ձմեռուայ
համար, միւսից մասը (СХРОПЪ) է պատրաստում
և այլն: Անս այս երկու ամաններն են, որոնք
յետոյ ստացան «ФРУКТО—ВОДОЧНЫЙ ЗАВОДЪ» ա-
նունը:

Օդի պատրաստելու իրաւունք տարէր գուցէ
10—15 գիւղացի տանայ: Իրաւունքը ստանա-
լուց որոշեալ օրերը կամ օրը այդ ամանների
կնիքը բանդովում է անցիղի կառավարութիւնից
նշանակած պաշտօնակատարի ձեռքով. իսկ երբ
լրանում է ժամանակը նորից կնքվում է և այն-
պէս մնում է ամբողջ տարին:
Օդի պատրաստելու համար գիւղացին պէտք է
իրաւունք ստանայ անցիղի կառավարութիւնից,
որ գտնվում է Նախիջևանում 80 վերստ հեռու.
Ալտուրից: Այդ իրաւունքը ստանալու համար
գիւղացին պէտք է չորս կամ հինգ օր չարաբով
և միսի մոտաւորապէս 15 րուբլի Ստանալուց
նա վերադառնում է տուն, չարաբովում է տասը
օր մինչև թուրքի թըլթիլը (հասնել): Ապա նշա-
նակած օրը (գիշեր և ցերեկ) նստում է այդ գոր-
ծարանի մօտ փայտ և այրում և ստանում է շատ
շատ 3 կամ 4 պուդ օդի, որի պուդը եթէ ծա-
խելու լինի կործանայ 4—5 րուբլի: Երեկի գոր-
ծարաններ:
Ամոյս 20-ին երկուդան մոտաւորապէս ժամը
մէկին զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած,
որից մի քանի անեղի պատեր տրաքեցան, բայց
ձեռք չեկաւ: Տեղի մօտ կէս րօպէ: Ասացի մո-
տաւորապէս ժամը մէկին, որովհետև ինչպէս ա-
զուրկների խելը, նոյնպէս էլ ժամացոյցները
երբէք իրարու հետ չեն համաձայնվում: Իւրա-
քանչիւր անհատ Ալտուրում ասում է իմ դա-
տողութիւնը ուղիղ է, իմ ժամացոյցը ուղիղ է:

ՆԱՍԱԿ ԽՐԱԿՈՐԻՆ
Եօթոր, 31 յուլիսի
Շատ մօտ է մեզ այն ժամանակը, երբ հայը
և հայունհին մոռացած իրանց մայրենի լեզուն
ամօթ և աւելորդ էին համարում հայ լեզուով
խօսել, իրանց որոց մայրենի լեզուն ուսու-
ցանել, իրանց նախնեաց պատմութեամբ զբաղ-
վել և մինչև անգամ իրանց հայ անուանել: Բայց
երբ լրագրութիւնը սկսաւ խօսել, դատել այդ
հակազգային ընթացքի մասին և հարուածել
նրան, երբ եկաւ արեւելեան ուսումնական
վերջին պատերազմը, երբ հայազգի և նրա դի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ЗНАЧЕНИЕ РУССКАГО СЕКТАНТСТВА. —
ՌՈՒՍ ԱՎԱՆՎՆԵՐԻ ՆՃԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
«РУССКАЯ МЫСЛЬ» ամսագիրը, յունվարի
տետրակ 1881

Վերջին ժամանակները ուսուց գրականու-
թիւնն ու մամուլը սաստիկ շատ սկսեցին պա-
րագել ուսուցողների հետազոտութեամբ: Ա-
զանգների հետազոտողներից ամենանշանաւորն է
Ա. Ս. Պրուզավին, որին և պատկանում է վե-
րև յիշված յօդուածների մի շարք, որ սկսվում
է Մոսկվայում հրատարակվող «Русская Мысль»
ամսագրի յունվարի տետրակից:
Պրուզավին նուրբել է իրան ուսուցողների
խղճմտաւոր ուսումնասիրութեանը և նրա գրչին
պատկանում են նոյն առարկայի վրա բազմաթիւ
յօդուածներ և «Голосъ» լրագրում:
Վերև յիշված յօդուածում Պրուզավին բերում
է նախ և առաջ բազմաթիւ վկայութիւններ և
հայեացքներ ուսուցողներին մասին այլ
և այլ նշանաւոր թէ տարագրի և թէ ուսուցիչ-
դիւանների գրուածները, ինչպէս կուստմարով,

կելով, Հակոտնաւզէն, Մէկէնդի-Ուալաս, Շչա-
պով, Սինիցին և այլն և այլն: Նա ծանօթաց-
նում է մեզ և այն բոլոր պաշտօնական գեղու-
ցումների հետ, որոնք Ալեքսանդր I և Նիկոլայ
I թագաւորներին ներկայացվեցան այլ և այլ
բարձր պաշտօնեաներից, որոնք ուղարկվեցան
ուսուցողները այդ թագաւորների հրամանով
յատկապէս ազանդաւորների կեանքը, նրանց
վարժապետութիւնն ու ձգտումները ուսումնասի-
րելու համար: Այդ պաշտօնական հետազոտող-
ներից նշանաւոր էին Լիպարանդի, Սինիցին, Ակ-
սակով, Բրեանչանինով և այլն:
Իւսուցողները սաստիկ բազմաթիւ են: Բա-
ւական է յիշել այստեղ մի քանի անուններ. Ֆի-
լիպովիցին, Ֆիդուէկցին, Բեզուպովիցին,
Նեմոլիակին, Հոգեոր քրիստոնէականեր, Վոզդե-
խանցին, Սիւտանկիցին, Կուսոբորներ, Մո-
լովաններ, Շտունդիստներ, Խլխտներ, Սկոպցիներ
և այլն և այլն:
Բայց այդ բոլոր ազանգները կարելի է բաժա-
նել երկու որոշ խմբերի վրա, իրանց ուղղու-
թեան համեմատ. մի ստիկներ և բացի օճա-
լիստներ: Առաջինները գերազանց են ապա-
գայ երկնային կեանքը, ինչու փրկութիւնը, ներ-
կայ աշխարհային, երկրային կեանքից: Նրանք
պատրաստ են իրանց ունը ամեն բարեբերից
զրկել ներկայ երկրային կեանքում, միմյանի երկ-
նային թագաւորութիւնը ժառանգելու համար:
Նրանք տանջանքը, մինչև անգամ, համարում են
անհրաժեշտ, այդ պատճառով չեն բողոքում աշ-
խարհային ոչ մի անիրաւութեան և անարդարու-

թեան դէմ: Կա է կատարեալ մի ստիցիզմ,
կրօնամուլութիւն:
Երկրորդ ուղղութիւնն ազանգները, բացի օ-
ճալիստները, իրանց կրօնական դասնու-
թիւնները հիմք բարոյական իմաստասիրու-
թիւնը դնելով, ձգտում են լօղիկապէս վերա-
նորոգել եկեղեցին, բարոյել իրանց կեանքը,
յեղափոխել հասարակութիւնը, հոգում են ներ-
կայ, երկրային կեանքի ձեռքը վերանորոգելու և
բարոյապէս բարւոյեցնելու: Այդ վերջինների կրօ-
նական—բարոյական վարժապետութեան հետ
միասին ձեռք ձեռքի տուած է ընթանում և
ստատեական հասարակա-քաղաքական վերանորո-
գութիւնը:
Առաջվայ ժամանակներում ազանգաւորներին
անհնայ հալածում էին. նրանց բանտարկում,
աքսորում, այրում, զլրատում, կախում, գլուխը
ջարդում, լեզուն կտրում էին և այլն և այլն:
Կա պատահում էր առաջվայ կայսրների ժամա-
նակ ճանջված, չարաբոված, հալածված ազան-
գաւորները վրդովվում էին և սրտում ուն էին
պահում կառավարութեան դէմ: Այդ պատճա-
ռով, ինչպէս հարորդում է Պրուզավին պաշտօ-
նական աղբիւրներից, տեսնելով որ նրանց հետ
քրիստոնէական կերպով չեն վարվում, ազանգ-
ներից շատեր յայտնեցին որ իշխանութիւնը
հակաքրիստոնէական է և վճռեցին իրանց աղօ-
թանքներում այլ ևս երբէք չաղթել իշխանու-
թեան համար:
Ազանգների մեծ մասը, ինչպէս գաւթօբորներ,
սիւտանկիցներ, վոզդիխանցներ, շտունդիստներ,

ընդունում են միմյանի աւետարանը, որպէս
սուրբ գիրք և ձգտում են ձգտութեամբ իրագոր-
ծել աւետարանի պատուէրները: Նրանք եկեղե-
ցիներ աւելորդ շինութիւններ են համարում, այլ
աղթում են ամեն տեղ, որտեղ նրանցից մի
խումբ է հաւաքվում: Նրանք քանանայ, այսինքն
կառավարութեան կամ եպիսկոպոսներից նշա-
նակված բանանայ չեն ընդունում, այլ նրանցից
ամեն մարդ, մինչև անգամ կին կարող է կանո-
նել ժողովի մէջ, կարգաւ աւետարանը կնիքանի
հասկանալի լեզուով, բացառել հանգիստականե-
րին քրիստոսի խօսքերը, քարոզ ասել: Այսօր
նրանք հաւաքվում են մի տան մէջ,— և այն օրը
այն տան տէրը, որի մօտ հաւաքվել են, քանա-
նայ է, քարոզիչ է. միւս կիրակի գումարվում
են մի այլ տան մէջ,— և այն տան տէրը քանա-
նայ է այն օրը: Շտունդիստներ չեն ընդունում
ոչ եկեղեցի, ոչ քանանայ, ոչ խաչք, ոչ մա-
սուհներ, ոչ ինչ արտաքին արարողութիւն: Նը-
րանք ասում են թէ աւետարանը պէտք է կար-
գալ, քրիստոսի խօսքը պէտք է հասկանալ և
նրա համեմատ վարվել, բարոյական լինել, սղ-
նիւ լինել, ուրիշն չը հարստանալ, ոչորին չը
ձեռանել,— ահա իսկական քրիստոնէութիւնը նը-
րանց կարծիքով,— և ոչ թէ խաչ հանել, աւետա-
րանի կազմը համբուրել առանց ըմբռնելու թէ
մէջը ինչ է գրված, եկեղեցու քարտեզը համբու-
րել կամ սուրբ պատկերները պաշտել: Վոզդե-
խանցներ աւելի էլ հեռու են գնում: Նրանք
մերժում են մկրտութիւնը: Ի՛նչ կը նշանակէ մը-
կրտութիւն, ասում են նրանք,— դա կը նշանակէ

ցագնորի անմահ անունները երեկոյան մեր օտար պարբերական թերթերի մէջ, երբ քաղաքական շրջաններում խօսվեցաւ հայի մասին և վերջապէս երբ Բերլինի վեճակը մտնում ընդարձակապէս հայի մասին հայր և հայուհին արթնացած գրագած են իրանց նախնեաց անցեալով և անհրաժեշտ պարտք են համարում իրանց որդոցը մայրենի լեզուով դաստիարակել, ազգային հոգեով դարգացնել, այժմ ամօթ և նախատինք են համարում մայրենի լեզուով չը խօսելը, ներքին չը գիտնալը և նրանով ընտանեկան կրթութիւն չաւանդելը: Իմ խօսքերս անհիմն չեն: Կօթորի ամբարանցի հայ-հասարակութեան մէջ, որ մեր հարուստ դասի ներկայացուցիչներն են, այդ շարժումն չօգտակելի կերպով աչքի է ընկնում: Ամեն մի ընտանիքում այժմ խօսում են հայի մասին, մայրենի լեզուի, նրա չիմանալու անհրաժեշտութեան մասին: Մէկը խնդրում է Եւրոպայից իր որդեկը մայրենի լեզու, երկրորդը պահանջում է մայրենի լեզուի նաև ուսուցանել և հայագի պատմութիւնը, երրորդը մայրենի լեզուի նաև իր կրօնը, և այլն: Այս սգուարութիւնը և շարժումն ընդհանուր է: Հայ օրերը, որ իր ուսումը աւարտել է պետական ուսումնարանի մէջ և կատարում է հայ ընտանիքում վարժուհու պաշտօնը, ամօթ է համարում մայրենի լեզու չը գիտնալը, նա էլ ուրախութեամբ ուսանում է նրան իրան յանձնված սաների և սանուհիների հետ: Մի տեղ հայրն է սովորում որդոց հետ, միւս տեղ մայրը: Կս չեմ մտաւնայ այն ազնիւ տիկնոջ խօսքերը, որ մէկ օր ասաց ինձ, թէ ես սովորում եմ հայերէն, որ իմ որդոց նաև խօսեմ և ուսուցանեմ նրանց և ընտանեկան կրթութիւնը աւանդեմ նրանով, բայց ավստ, ասաց, որ չաւ ուշ եմ սկսում: Այն քաղցր տպաւորութիւնը, որ թողնում է ինձ վրա այստեղի հայերի շարժումն դէպի մայրենի լեզուն, դէպի ազգութիւնը և դէպի ազգային պատմութիւնը, չեմ կարող դժուարանքով հրապարակ չը հանել: Հայը այժմ քնած չէ, նա զարթել է և կանգնում է ապրել, նա այլ ես երկրի չունի որպէս ազգութիւն անհետանալու, կամ ինչպէս ասում են, ձուլվելու ուրիշ ազգերի հետ: Բայց պարտ է ասած, կան և այնպիսիք որոնք շատ խոր քնի մէջ են դեռ ևս և կարծես ենթարկված լինեն ձմեռան անհիմն: Արանց թիւը դեռ մեծ է: Արանց համար ազգութիւն, մայրենի լեզու, և ազգային պատմութիւն երկրորդական և երրորդական բաներ են... Բայց կը զայ և սրանց արթնանալու ժամը. այն ժամանակ մտաւոր շարժումն կը լինի ընդհանուր և այն ժամանակ միայն հայ ազգը փրկված կը լինի:

Տէր-Եղնիկ

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՈՐԻՆ

Նոյեմբ. 29 յուլիսի

Ձեր պատուական լրագրի 134 համարում ներքին լուրերի շարքերում իմ վերաբերութեամբ մի քանի տող սխալ գրութեան մասին պարտք եմ համարում յայտնել, որ լրատու պարտք, քաղական չէ որ ինքը չեղզի է ուղիղ ճանապարհից, իզուր ջանում է մոլորացնել և ուրիշներին ստեղծել թէ իբր ես մի քանի անգամ հրաւիրագրեր եմ ուղարկել Նոյեմբ. առաջագործ անձանց, որ նրանք ժողովին իմ սենեակը և այնտեղ խորհեն ուսումնարանաց մասին, իսկ տէր Սիմեոն քահանան ծածուկ յորդորել է ժողովըրդին, ուստի և այդ նպատակը չէ իրագործվել: Արա դէմը ես կասեմ, որ ոչ թէ չեմ գրել հրաւիրագրեր որս կամ նրա անունով, ժողովներ կազմելու նպատակով ուսումնարանները առաջ տանելու համար, այլ անգամ պարտի երեակայութեան մէջ սարքված հրաւիրագրերի վրա մտածել չեմ. եթէ պ. թղթակիցը թշնամութիւն ունի արժանապատիւ. Նոր հետ, թող իր հաշիւը և ոյրը այլ ճանապարհներով տեսնէ և ի զուր տեղը իմ անունը չը կապէ իր անձնական մանրակրկիտ հաշիւների հետ. իսկ եթէ կարծում է որ այդպիսի անտեղի գրութիւնները հաճելի կերան ինձ, ի զուր է այդպէս մտածում, որովհետեւ ես բնաւ և երբեք ինձ իրաւունք չեմ տուել ցարդ և չեմ էլ տայ այսուհետ ընդունել ինձ վրա այն պատիւը, որը ուրիշներին է պատկանում և որի մէջ թէ այսպէս և թէ այնպէս մասնակցութիւն չեմ ընդունել:

Ասածներըս պարզ նկատելի է, որ արժանապատիւ Նոր դէմ ասածներն էլ պէտք է զրպարտութիւն համարել:

Վ. Կարկանդակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակին» կարելի է գրվել 5 ամսով, այսինքն օգոստոսի 1-ից ներկայ թիւ մինչև յունվարի 1-ը 1882 թիւ: Հինգ ամսվայ բաժանորդութեան դինը 5 բուրլ է:

Որքան տղէս և նախապաշարված է մեր ժողովուրդը կարելի է հետեւել լուրից եզրակացնել: Գորուց մեզ գրում են որ գործիչների վրա մեծ ազդեցութիւն է ունեցել դիտար աստղի երևալը: Նրանք ասում են թէ այդ գիտաւոր աստղը նշան է որ շուտով աշխարհը պիտի վերջանայ,— և ահա ամենքը սարսափեցան. ոմանք սկսեցին օրը քսան անգամ եկեղեցի գնալ. իրանց բազմաթիւ մեղքերը քանակու համար, ոմանք էլ կրկնապատիկ ք է ֆ են սկսում:

ՐՈՍՏՈՎ, քաղաքից (Գօնի վրա) ստացանք պ.

Երեխային ջրով լուանալը միայն, քանի որ մանուկը դեռ չէ ըմբռնում ինչ է Աստուած: Նրանք չեն ընդունում խոստովանութիւն և հաղորդութիւն: Կարող է միթէ մի մարդ, որ նոյնքան մեղաւոր է, որքան միւսները, խոստովանեցնել մի այլ մարդուն. խոստովանվել, նրանց կարծիքով, կարելի է միմիայն Աստուծու առաջ, իր խղճով, ասանքի առաջ: Աստուած հոգի է, ուրեմն Աստուծուն պէտք է հասկանալ հոգեպէս, պաշտել նրան հոգեպէս և չը պէտք է պաշտել աւարկաներ իտպէր մասունքներ, չը պէտք է համբուրել քարեր, արծաթ, ոսկի, պղինձ և այլն: Աստուածը հոգի է, պնդում են նրանք, ուրեմն պէտք է աղօթել նրան հոգեպէս, կարգալ և հասկանալ աւետարանը, աւելի նախապատիւ համարել տան մէջ, սենեակում, մէնակ, իր մտքում աղօթել, երեկոյան քնելուց առաջ իր յիշողութեան մէջ անցնելով անցած օրվայ արածները և իր սրտում առանց արտաքին որ և է ձէների, Աստուծուց ներողութիւն խնդրել:

Շտուճիստներ, Ակիւտանցիներ և Վօզնիստանցիներ որպէս հիմք իրանց կրօնական-հասարակական վարդապետութեան ընդունում են աւետարանի բարոյական սկզբունքները՝ սէր, եղբայրութիւն և աշխատանք: Բոլոր մարդիկ միմեանց մէջ եղբայրներ են և հաւասար են միմեանց, ամեն իշխանութիւն, թէ հոգևոր, թէ մարմնավոր պէտք է ընտրողական սկզբունքի վրա կայանայ: Ազանդները ամենաճայտայտները ընդունում են որ հողը, ջուրը և անտառը Աստուծու ձեռքով ստեղծված լինելով, չը պէտք

Յակոր Քայեալեանից 20 բուրլ յօգուտ վանի հայերի, որ պէտք է հասցնենը իրիմեան հայրիկին: Այդ փողը ժողովեցաւ, ինչպէս մեզ գրում են, հայոց յայտնի բանաստեղծ Գամառ-Քաթիպայի յորդորանքով: այս յուլիսի 8-ին, երբ պ. Յ. Քայեալեանի շինվելու տան հիմնարկութեան ձէսը կատարվեցաւ. Բոստով քաղաքի մէջ: Փող ժողովելուց առաջ մեր բանաստեղծը մի ճառ ասեց հանդիսականներին՝ հայի ձեռքով մի նոր սուն շինվելու առիթով:

Մեզ պատմում են, որ երբ որ Մակար եպիսկոպոսը իր երեկի կօնտրակա էր կապում պ. Շարուրովի հետ, նա մի և նոյն ժամանակ ուղարկեց պայմանագրի պատճէնը Վեհափառին պայմանագրի կապելու համար նրա համաձայնութիւնը ստանալու նպատակով: Զանկարծ կաթողիկոսից պատասխան է ստացվում որ նա համաձայն չէ այդ տեսակի պայմանագրի հետ, այն ժամանակ Մակարը շուտով ստորագրել է տալիս պայմանագրեր անցած թիւով, որպէս զի կարծին թէ գործը այնքան նշանաւոր էր որ նա կարող չէր սպասել կաթողիկոսի հրամանին և իբր թէ հրամանը ստացվեցաւ, երբ արդէն պայմանագրեր կապված էր:

Վ. ԵՐԻՆ-ՈՒՂՈՒԼ ԻՍՄԻՑ մեզ գրում են: «Յուլիսի 20-ին երեկոյան մտաւորապէս ժամը մէկին զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած, որից մի քանի սների պատերը արաբեցան, բայց ձեռք չեղաւ»:

Մենք ստացանք հետեւել նամակը մի թիֆլիսցի պարսից: «Շարուրովի գործի վրա խօսելու ժամանակ, դուք, կարծես, գոհ էք երևում որ ընտրվեցաւ մի յանձնաժողով, նրա պայմանագիրը ընկնելու համար: Ուրախալի է, այն, որ հասարակութիւնը սկսում է կօնտրոլ անել եկեղեցական գործերի վրա, աւելի էլ լաւ կը լինէր, եթէ ձեր խորհրդին հետեւելով ընտրէին մի այլ յանձնաժողով Մակար եպիսկոպոսի բոլոր գործերը քննելու նպատակով: Բայց հարցը դրանում է՝ արդեօք ընտրութիւնը աղող է թէ ոչ: Զանձնաժողովի 5 անդամներից մինը, Գաւիթ Ղորղանեան, ասենք ընտրվեցաւ որպէս իրաւաբան, Սարգիսեանին ես բողոքվին չեմ ճանաչում: Իսկ մնացած երեք պարոնները կարող են շատ լաւ, ազնիւ անձինք էլ լինել, բայց կարծեմ ապացուցին իրանց անընդունակութիւնը: Պ. պ. Աթիսեան և Յովհաննիսեան, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներ լինելով, ապացուցին որ անընդունակ եղան առհասարակ դպրոցը օրինաւոր կերպով առաջ տանելու, ուրիշ կողմից անկարող եղան վերահսկելի դպրոցի գանձարանի վրա, երբ նրանց մեծ գումար էր կորել: Վերջապէս քաղաքագուրու Ատիսեանն էլ իր անընդունակութիւնը ցոյց տուց իր պաշտօնի մէջ:

Զօգուածագիրը ասում է թէ ազանդաւորները իրանց կանօնաւոր, բարոյական, ինչպիսի, ժողովակ կանքով նստել են անտեսական մեծ բարօրութեամբ: Նրանք միում են վիճարանութիւն, մտքի զարգացում, ընթերցանութիւն, թող իր տալիս ամենքին յայտնել իրանց ազատ մտքերը և նոյնը պահանջում են և իրանց համար:

Վօզնիստանցիները ընդունում են ամուսնութիւն, որպէս քաղաքական, ընկերական և ոչ թէ կրօնական գործողութիւն: Ընտանեկան կեանքը նրանց մօտ հիմնվում է հաւասարութեան սկզբունքների վրա: Կինը մարդու հետ հաւասար անդամ է համայնքի և ընտանիքի մէջ: Երեխաներին նրանք կրթել չեն պատժում, այլ աշխատում են աղբի նրանց վրա բարոյապէս: Վերջապէս նրանք բաւ առ բաւ ընդունում են Գրիստոսի խօսքը թէ ոչ ոքին տէր չը պէտք է ասել, բացի երկնային տիրոջից:

Զօգուածագիրը հաստատում է թէ այդ ազանդները եւրոպական Ռուսաստանում սարսափելի կերպով տարածվում են և արդէն այժմ կարելի է ասել թէ եւրոպական Ռուսաստանի ազգաբնակչանքը գրեթէ կէսը պատկանում է այլ և այլ ազանդներին, իսկ ուղղափառութեան հետեւողները հեղհեղեթ թեով պակասում են: Քահանաները ամեն նախնեցիկից անդադար գանգատվում են իրանց պաշտօնական զեկուցումներին մէջ թէ նրանց ծուխերը հեղհեղեթ նուազվում են և ուղղափառ ժողովուրդը դառնում է ազանդաւոր:

Ազանդաւորները, վերջացնում է իր յօդուածը

Նա այժմ պէտք է կօնտրոլ անի եկեղեցու գործերի վերաբերութեամբ, իսկ ոչ մի ժամանակ այնքան անկարգութիւններ չը կատարվեցան քաղաքում և ուղարկվայի մէջ, որքան դրա օրով: Այդ կարծեմ ամենքը գիտեն:

«Юридическое Обозрение» ամսագրի մէջ տրչվեցաւ դատաստանական պալատի անդամ պ. Բաշեյի յօդուածը, որի մէջ նա ապացուցանում է որ ազգօկառութիւնը թիֆլիսում ընկել է, ազգօկառութիւնը իրանց պարտքը չեն կատարում և բազմաթիւ զեղծումներ են անում: Թիֆլիսի իրաւարանական միւս լրագիրը, «Судебные Порядки» պատասխանում է Բաշեյի յօդուածին, ցոյց տալով թէ մեր փաստաբանները ոչինչ նըշանակութիւն չեն կարող ունենալ դատաստանական գործերի կանօնաւոր ընթացքի և վճովելու վրա, քանի որ մտցրած չը լինի մեզ մօտ կրղուեալ դատաստանը: Ազգօկառութիւնը խօսում է ժամերով, իսկ Նահանգական Կատարանի կամ Կատաստանական Պալատի դատաւորները նրա տի ժամանակ շատ անգամ կամ լրագիր են կարդում, կամ նամակ են գրում, կամ իրանց մէջ խօսում են, ցոյց տալու համար թէ ազգօկառութիւնը բոլորովին աւելորդ են: Իսկ երբ փաստաբանը վերջացնում է խօսել, դատաւորները թղթերի միջից հանում են մի թերթ թուղթ, արդէն պարտատա նարցելով և գործի վերաբերութեամբ թեղուցիւղալով: Այդպիսի ճանգամանքներում, ի հարկէ, ազգօկառութիւնը ոչինչ նշանակութիւն չի ունենայ:

Արդէն սկսում են մի քանի տեղերից գրվել վիճեանայի «Journal d'Orient» լրագրին: Մենք ստացանք մի քանի բաժանորդների փողերը իրանց հասցէներով: Կրբ որ մի փողը ի շատ նշանաւոր գումար կը հաւաքվի, ամսինչպէս կուղարկենք վիճեան, յիշեալ լրագրի խմբագրութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻՆՏՈՒՄ

Արագիրները հազորդում են հետեւեալը: Հեռագրական կարճաւտտ հաղորդութիւնը Տուրի մէջ արտասանած Գամբետտայի ձառնի մասին դեռ ևս չէ թող տալիս որոշել հանրապետական կուսակցութեան առաջնորդի քաղաքական նախազեծը, որ ամենից շատ հետաքրքիր է Փրանսիական պատգամաւորների նոր ընտրութիւնների ժամանակ: Ահիսերէ է միայն, որ Գամբետտայի անուան և տաղանդի ազդեցութիւնը նոյնն

Պրուզավին, պահանջում են անձնական ազատութիւն, խօսքի, գրութեւքի և քարոզի ազատութիւն, պահանջում են կանանց և ազամտորկանց հաւասար իրաւունքներ, պահանջում են որ եկեղեցին լինի մարդկանց սրտում և ոչ թէ մարդկանցից դուրս, պահանջում են բոլոր ձէսերի և արարողութիւնների վերցնելը, պահանջում են թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութեան վերաբերութեամբ ընտրողական սկզբունք, ազանդաւորներից մի քանիք այնքան հեռու են գնում, որ մինչև անգամ պատերազմ յանցանք են համարում, համարելով նրան մարդապանութիւն:

Առաջ ազանդները հաղածվում էին, ասում է Պրուզավին,— և նրանք այնու ամենայնիւ հեռուց հեռէ տարածվում էին: Այժմ կառավարութիւնը աշխատում է ազանդաւորներին մէջ վրագրտութիւն և լուսաւորութիւն տարածել, դպրոցներ հիմնել, ուսու քահանաները աշխատում են նրանց վրա քարոզներով ներգործել և յետ դարձնել նրանց ուղղափառ եկեղեցու ծոցը: Բայց ընդհակառակն, քանի գրագիտութիւնը, լուսաւորութիւնը աւելի է տարածվում ժողովրդի մէջ, բոլորն էլ վկայում են որ ազանդաւորների թիւը աւելի էլ մեծ է դառնում:

Գ. Ա.

է, ինչ որ առաջ, չը նայելով նրա ժամանակաւոր անաջողութիւններին և նրա հակառակորդներին աշխատանքներին: Այս ճիշդ կարող մրցել Գամբետայի հետ, նրա նման օւղղութիւն տալ ժողովրդին և հասարակական կարծիքին: Նրա իւրաքանչիւր ծառայածագանք է գնում մինչև անգամ Գրան-սիայի սահմաններէն դուրս, զարթոցներով Եւրոպայի ուշադրութիւնը դէպի այն դիտարութիւնները և յայտնութիւնները, որոնք արտայայտում են Ֆրանսիական հանրապետութեան արամադրութիւնը: Այս թէ միայն Գրանսիայի, այլ և Եւրոպայի մէջ Գամբետային համարում են ժամանակակից Գրանսիայի գլխաւոր գործիչ և երկրի ազգայն կառավարիչ: Անձնական ընդունակութիւններին և կռանդոտ գործունէութեան շնորհիւ այդպիսի դրութիւն ստանալով, Գամբետայ ներկայացնում է Ֆրանսիական այժմեան հանրապետութիւնը նրա բոլոր ձգտումներով և յոյսերով: Տօրի այցելութիւնը, որ ժողովրդական պաշտպանութեան ժամանակաւոր կառավարութեան կենտրոնաւորին էր, ժողովրդին կը յիշեցնէր այն ջերմ աշխատանքները և անձնագործութիւնը, որ անում էր Գամբետայ գերմանական արշաւանքի ժամանակ Գրանսիական փրկելու համար: Գտնուելով և կասկածել Գամբետայի կուսակցութեան յաղթութիւնը ազգայն ընտրութիւններին ժամանակ, որովհետև այդ կուսակցութեան նշանաբանն է այն բոլորը, ինչ որ կարող են պահանջել Ֆրանսիական հասարակութեան միջին, ամենամեծ ազդեցութիւն ունեցող և բազմաթիւ դասերը:

Միայնակները և բռնապարտիւնները իրանք խոստովանում են, որ նրանց գործը և ձգտումները անյուսալի են: Նրանցից շատերը հրաժարում են գործելուց և միանում են չափաւոր հանրապետականների հետ: Այժմեան մինիստրութիւնը կրկին ստիպված կը լինի իր սեղը տալ աւելի առաջադեմ և ընդունակ տարրերին, որոնք կը կարողանան իրագործել Գամբետայի առաջարկած նախագիծը ներքին վերանորոթիւնների մասին:

ԱՆՊԻՍ

Օգոստոսի 3-ին անգլիական պարլամենտի շինութեան առաջ տեղի ունեցաւ հետեւեալ անցքը: Առաւօտեան 11 ժամին վեստմինստերի հրապարակի վրա մեծ շարժում սկսվեցաւ: Բրէզլո նախագահը շարժեց, որ ինքը այդ օրը ուժով կը մտնի պարլամենտը: Նրա ընտրողներից մօտ 500 մարդ եկան Լօնդօն և հաւաքվեցան վեստմինստերի պարտի առաջ: Այդ խումբի շուրջը բաւական մեծ բազմութիւն էր հաւաքվել: 200 մարդիկանցից բաղկացած պոլիցիան պատրաստ էր, իսկ պալատի երկաթէ դռները փակված: Ներս էին թողնում միայն պարլամենտի անդամներին և խնդրագրիւններ տուողներին: 11½ ժամին բաց կառքով հասաւ ինքը Բրէզլո: Ամբողջ նրան ընդունեց միաձայն ծափահարութիւններով: Պալատի դռները բացվեցան և Բրէզլո անցաւ պարլամենտի բակից պատգամաւոր Լաբուշերի և պոլիցիական տեսչի ուղեկցութեամբ: Ստանիսլոյ ոչ ոքի ներս չէին թողնում: Հէնց որ սպիկեր բռնեց իր սեղը, Բրէզլո մտնեցաւ դահլիճի դռներին, պատրաստվելով ներս մտնել, բայց փոխնախագահ Երակին պոլիցիականներով շրջապատված կապեց նրա ձանապարհը: Երակին յայտնեց, որ պարլամենտի սպիկեր յանձնել է նրան ներս չը թողնել Բրէզլոյին: Վերջինը

պատասխանեց, որ նա միշտ պատրաստ է ենթարկվել պարլամենտի օրինաւոր պահանջներին, բայց, իր իրաւունքների վրա հիմնվելով, պահանջում է իրան ներս թողնել և մտադիր չէ յետ դառնալ: Երակին կրկնեց, որ նա այնու ամենայնիւ ներս չէ թողնել Բրէզլոյին: Գրանսիայ յետոյ Բրէզլոյ մեկնեց իր ձեռքը փոխնախագահին իր ձանապարհից հեռացնելու համար, իսկ նա մեկնեց ձեռքը և ծառաներից մէկը բռնեց Բրէզլոյին: Արտաքրգած պատգամաւորը բռնեց ծառային շլինքից և, նրան թափ տալով, բացականչեց. «Թող փորձենք ինձ կանգնեցնել»: Բայց նոյն իսկ լուպէին պոլիցիականները բռնեցին Բրէզլոյին և թրեկով տարան բակը, անցկացրին բակից և դուրս տարան փողոցը: Այդ տեսարանը ամենքի վրա շատ ծանր տպաւորութիւն գործեց: Բրէզլո բարեթիւնեցի գունաթափվել էր և մի քանի րոպէ ուշափոխեցաւ: Պոլիցիականներից մէկը նրան մի բաժակ ջուր տուց: Բրէզլոյի երեկոյց յետոյ փողոցի վրա եղած ամբոխը կանչում էր. «Կեցցէ Բրէզլո»: Պոլիցիականները հսկում էին, որ Բրէզլո չը վերագրանայ պարլամենտը: Նա յայտնեց պոլիցիական տեսչին, որ շուտով նոյն փորձը կանի և նրան կօգնեն այնքան մարդիկ, որ պոլիցիան ստիպված կը լինի նրան կալանաւորել: Տեսչի հարցին նա պատասխանեց, որ մի միջոց մարդիկ նրան կօղկեցնեն: Պարլամենտի մէջ ոչինչ չէր լսվում, միայն պատգամաւոր Լաբուշեր, վերագրանալով դահլիճը, պատմեց պատահածը:

Գործիչի մէջ նորերումն Պարնելի նախագահութեամբ կարուածական միութեան ժողով կայացաւ, որին բազմաթիւ հոգեւորականներ և աշխարհականներ էին մասնակցում: Միութեան գանձարանը մի քանի օրվայ մէջ 300 ֆունտ ստերլինգ նուիրաւորութիւններ է ստացել: Ժողովի ժամանակ կարգադրեցաւ կարուածական միութեան գանձապահի նամակը, որի մէջ ասված էր, թէ իրանդական ժողովուրդը արհամարհում է իրան Անգլիայի հետ կապուած ստեղծի կապերը: Պարնել սասց, որ կարուածական նոր օրէնքը հրատարակված է կարուածատներին պաշտպանելու համար և խորհուրդ տուց չը հաւատալ այդ օրէնքին: Այնուհետև Պարնել առաջարկեց մի ժողով կազմել, որպէս զի նա քննէ այն միջոցները, որոնցով իրանդական ժողովուրդը կարողանայ հասնել իր գլխաւոր նպատակին, այսինքն, որ նա կատարելապէս տրեք իրանդական հողերին: Ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը:

Օգոստոսի 3-ին Լօնդօնի մէջ կայացաւ բժշկական միջազգային կոնգրեսի առաջին նիստը: Նիստին մասնակցում էին 2,500 անկի անգլիական և օտարազգի բժիշկներ, որոնց թւումն էին շատ երեկելիներ: Ուէլսի իշխանը բաց արեց ժողովը մի երկար ծանով, որով մեկնեց այն օգուտը, որ կը տան այդպիսի բժշկական կոնգրեսները: Իշխանից յետոյ խօսեց կոնգրեսի նախագահը և մեկնեց, որ կօնգրեսը կարող է գիտնական ազդեցութիւն ունենալ, որովհետև կարծիքների արտայայտվուց ճշմարտութիւն է ծագում: Ժողովին ներկայ էր գեյմանական թագաւորանը:

ՇԵՑԻ ՈՒՊԵՏՈՒԼԼԱՆ

Թայմզ լրագրոյն Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ յունիս 20 թուով: «Քուրդաստանէն եկած վերջին լուրեր կը ծանուցանեն թէ ի Պարսկաստան Քուր-

դական արշաւանքի մը անմիջական վտանգն անհետացած է: Շէյխ Ուպէյտուլլահի մեծ ազդեցութիւնը ժողովրդին այն համոզման վրայ հաստատուած էր թէ Շէյխը Վեհ: Սուլթանին հրամանաց համեմատ կը գործէ, և Օսմանեան իշխանութիւնը ստրա հակառակին հաստատող յայտարարութիւն մը հրատարակածին պէս, Շէյխին հաւաքած բազմաթիւ անկանոն զօրքերն անմիջապէս ցրուեցան: Տեսնելով որ միայն 2,000 մարդ իրեն հաւատարիմ մնացած էր, Շէյխը դժկամութեամբ հաւանեցաւ հնազանդի Գրան հրամանաց, և քանի մը մարդերով վան գնաց, ուր պատուով ընդունուեցաւ: Այնուհետև վանէն մեկնած է Կ. Պոլիս գալու համար: Միւս կողմէ, Շէյխ Ապա-իւ-Խիւտա (°), որ բարձրագոյն ակմբող մէջ մեծ շնորհ կը վայելէ, և շարունակ յարարութեան մէջ է Քուրդ զբաղուց հետ, երեսէ ինկաւ, և կամբաստանուի թէ Վեհ: Սուլթանին դիտարութեանց նկատմամբ Քուրդերը խարած էր: Կս կը կարծեմ սակայն թէ Ապա-իւ-Խիւտա բարձրագոյն հրամանաց համեմատ կը գործէր, բայց հիմն Քուրդերը գրգռելու ընթացքը թողուած լինելով, յանցանքն Ապա-իւ-Խիւտայի վրայ կը բեռնաւորի:»

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՍՈՒՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 25 յուլիսի
Քրդերի արշաւանքներին մասնակցող բոլոր նշանաւոր ազգայնական ճաշիկ ազգային իր արծա՛նաւոր պատմոյթ պանել տալուց յետոյ, պարսից կառավարութիւնը իր ուշադրութիւնը դարձրած էր մի այլ նշանաւոր ցեղապետի վրայ, որը Սուլթանի մէջ ազդեցութիւնով առաջին անգամ սուր բարձրացրեց պարսից կառավարութեան դէմ և արդե՞ջ Սուլթանի կառուած սպասարկելով ճաղարաւոր անձինքների մանուսն պատճառ դարձաւ, այդ անձը շամախ խանն էր, որը իր նրոտակներով անթիւ միասնեց տալուց յետոյ գնացել էր Օսմանեան երկրը: Վերջապէս անցեալ օր լուր ստացանք որ մի շարքով սրանից առաջ շամախ խան իր մարդիկներով անցնելով կրկին Սուլթանի պաշարվում է պարսիկ զինուորներով, և այդտեղ մի փոքր ճակատամարտից յետոյ ստանում է իր գործած այնքան չարադրութեանց արդարացի պատիժը: Պատմում են որ չը նայելով այն գնտակի կարկառին, որ սեղում էին նրա վրայ, նա դարձեալ մաքաւում էր մահուան դէմ, մինչև որ օրհասական գնտակը ճնկեց նրա սրտի մէջ:

Սպանից և այդ նոխայ արեւմուտուն, և թողեց իր ետեկց մի մշտնջենաւոր սի և ասելու թիւն քուրդ և պարսից ցեղերի մէջ:
Մեր ուստանայ և ամենայն կողմերէն յայտնի է, որ իրանց հարգաւոր արեւմակից եղբայրներից մի մասն էլ ընկաւ պարսից իշխանութեան տակ, և ճետակաւ պարսից և Քարսկաստանի գանազան քաղաքներում: Գլխաւոր պարսկապետը այդտեղի հայերի փաճառաւորութիւնն է, և ըստ մեծի մասամբ արեւմուտունութիւնը և երկրապետութիւնը հին և նաճակտակաւ պարսից ձեւով ներստեղի է նաև որ իւրաքանչիւր տարի թէ Գարսապի և թէ այլ կողմերի հայերից գնում են ուսուց հողում մշակութիւն անելու, որոնց շատերի ընտանիքները դան խեղճութեան մէջ անհետանում են: Վերաւունք օրինակ շամախի, Սպանի և Գարսապի կողմերի հայերին, այդ կողմերում մի տաս տարի առաջ եղած հայերի 1/3-ն անգամ չէր կայ, որովհետև պանդխտութիւնը, կղզու չի մանուկով փոքր առ փոքր կրօնախորտութիւնը և սրբիլ գտան ճանգամանքներ օրից օր պակասացրել են այդ կողմերի հայ ազգայնականութիւնը: Ինչպէս տաճկանայերի մէջ, նոյնպէս և պարսկահայերում կան բազմաթիւ տեղեր որտեղի հայ ժողովուրդը բոլորովին չէ զանազանութիւնը, չը գիտէ մայրենի լեզու, միայն հայ է անուանում իրան եկեղեցի գնալով, բայց ինչ մի բարոյական օգուտ կարող է քաղել նա եկեղեցուց, երբ նոյն իսկ քահանայ հայերն չը դիտէ միայն սովորել և ասանց ոչինչ իմաստ հասկանալու: հայերէն վարժութիւնը, որոնցից շատ են մասնաւոր Վարաշու կողմերում (նա իմ աչքովս տեսած եմ այդպիսիները) ի հարկէ ոչինչ, և առ գլխաւոր առիթով որ հայերը հազարներով գնում են դէպի բողոքական միսիոնարը, կամ լուծվում են փոքր առ փոքր մահմադականութեան խաւարի մէջ: Կրկնում եմ, ինչ մեղաւոր է բողոքական միսիոնարը երբ գննէ սովորեցնելով նրանց իրենց մայրենի լեզուն, նաև բանալով ուսումնարաններ չէ թողում նրանց ընկնել ստուգեալ խաւարի— մահմադականութեան մէջ: Այդ, մեղաւոր չէ լուսաւորչական եկեղեցուց իրենց գաւառներին խղճ միսիոնարը, քանի որ հարկաւոր արեւմուտուն ճանգիստ ուտելով ազգի փողերը խոժովում են փափակ բարձրով վաղարշապատի անկեւններում: այլ

ևս որ օրուան համար էլ միմիայն բազմացրել է այդ սեպուղիներին, երբ ամբողջ մի հօտ չի մանալով լեզուն, (որ ոչինչ նշանակութիւն չունի էլ միմիայն և խաւարակները աչքում) փոխելով իրենց կրօնը ընկնում է եւսուցող միսիոնարի կողմը, այդ բոլորը շատ լաւ գիտեն էլ միմիայն սեպուղիները, բայց այդպէս մարդիկ ուղարկելու համար ծախք է հարկաւոր ասի:

Այստեղ յիշում ենք նաև մի բան. մի քանի տարի առաջ պարսկաստանցի մի քանի հայեր ընկերութիւն կազմելով Թիֆլիսում, հայերէն լրագրիւններ ձրխապէս տարածում էին պարսկահայերի մէջ: առաջինը որ նրանցից շատերն նկատեցան պէս մատչելի չէր լրագրութիւնը, երկրորդը, նրանք լրագրական նշանակութիւնը գետ այնքան չեն նախկայել: հարցնելու, սրբին, միթէ յարմար չէր որ էլ միմիայն, էթէ խնայում է իր շրջապատող հարկաւոր մեքիթա հաց ուտողներին ուղարկելու հօտը պաշտպանելու, գոնեայ փոխանակ 400 ռուբլ տալու մի խաւարակ էր և յետագայ լրագրական գաշտպանելու համար, որ ազգին բացի միտայից մի օգուտ չունի, տար այդ 400 ռուբլին և ձրխապէս լրագրիւն տարածէր այն տեղերում, որտեղ միսիոնարները մահազար անխնայ գործում է միտա չունի: Թող ինչ հայ լրագր ուղարկ է լինի, լրագրութիւնը աւելի գործ կարող է կատարել քան մի ուսումնարան: Անհրաժեշտ եմ համարում յիշել այստեղ նաև որ Թարսիքի ընթերցարանը (Վշախի) պատուարժան խմբագրութիւնից նոյնպէս և մի երկուսից ձրխապէս լրագրիւններ է ստանում: բայց ինչ իրաւումը նա միայն իր անգլիաներին է տալիս կարգու, քանի որ նրանք ազգային լինելով բացի անգլիաներից կարող են կարող նաև նրանք, որոնց միջոցները չեն ներում անգամ գրվելու կամ լրագրի ստանալու:

Այս խնդրի վրա, ձրխապէս պարսկահայերում լրագրիւններ տարածելու, դարձում ենք մեր հայ, մանաւանդ պարսկահայ հարուստների ուշադրութիւնը: այդ մի մեծ գոհորութիւն չի պահանջի, մանաւանդ կարող է մեծ օգուտներ արտադրել: կամ որ աւելի էլ լաւ է հիմնել Թարսիքում մի հայ լրագրի, պարսկահայոց առաջին օրացու: Ի հարկէ մեր այս տաշարութիւնը կը մնայ առանց արձագանքի, բայց դարձեալ մի որ և է էլ միմիայն յի արեւելի հրաւեր կամ պահանջը լրարուտն կը վարձատրվեն, ինչպէս որ Արշակունի գաղթականներին համար պարսկահայոց ստուած հազարները:

Սպանաթի մէջ Գ. Մուշեղեանց արժ. սրբազանը 5000 թումանի չափ փող է հաւաքել (պարսից փող) սպանաթացիները, և գնացել է այնտեղ մի ուսումնարան հիմնելու: մենք ընդդէմ չենք այդ նպատակին, միայն խնդրում ենք որ ուսումնարանի համար հրաւիրվեն հմուտ ուսուցիչներ և իր կից ունենայ ուսումնարանը և մի ընթերցարան: առանձը անում է չնպասել և յուսաւ:

Արև Ապրիլեանց

ՄԵՏԱԿԻ ԶԵՆՈՒԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԵՂՈՍՏԻՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 օգոստոսի: «НОВОЕ Время» լրագիրը հաղորդում է լուրերի հիման վրայ որ Պայտաի միևնույն կամ Արևելքերը իր պաշտօնի թողնելը տեղի կունենայ սեպտեմբեր ամսին: Երէկ շինական դեպարտամենտի գրադոման յայտնեց Արևական դեպարտամենտին մարկից 3գէնդի Ս. Պետերբուրգ գալու մասին և խնդրեց մի որոշ օր նշանակել դաշնադրութեան վաւերացման և վերջական փոխանակութեան համար: Գլխաւոր շտաբի մէջ մշակվում է մի պրօէկտ գործնական գորքի օճիցէններին ուժիկ աւելացնելու մասին: Ինչպէս լսվում է, ուրիադիկների պաշտօնները վերցված չեն լինի, այլ կը կատարվեն մի քանի էական փոփոխութիւններ ուրիադիկներին արժած հրահանգների մէջ: Այդ պաշտօնների ծառայութեան համար աւելի ինտենսիվեցան անձինք գրաւելու նպատակով դիտարութիւն կայ աւելացնել նրանց ուժիկները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ., երկրորդ 94 ռ. 75 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 231 ռ., 75 կ., երկրորդ 230 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 87 կ., երկրորդ 91 ռ. 87 կ., երրորդ 91 ռ. 87 կ., սակի 7 ռ. 76 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրայ արժէ 25,69 պէնս, ռուսաց 100 ռ. շամբուրդի վրայ արժէ 219 մարկ, 75 պֆ., փարսիքի վրայ արժէ 270 ֆրանկ, 75 սանտիմ: Բօրայի արամագրութիւնը ամուր է:

Խմբագիր—Մատարակող ԳԻՒԳՐ ԱՐՄԲՈՒՆԻ

Յ Ը Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Բ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծությունները ժողովածու են, տարած Մասկայում ամենաբարձր թիվը վերայ, հեղինակի վիճակը պատկերով, զինը 50 կ. վաճառվում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կրուսո՝ Արանեան " 60 կ.
- 2) Ահմէդի տոպրակը՝ Լալայեան " 10 "
- 3) Ծագող արքայ արձ. և չափ. բանից՝ Կոստանեան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան " 40 "

Վերջին երկու դասագրքերից գումարով գնողները նշանաւոր զինքն են ստանում:

144 Արժուճու գաղտնի 144
ամենաէական պահեստ
մարտի և հայելիների:

ՅՆ ԳԱԼԵՐԵՖ ԱՐՇՐՈՒՆԻ

ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ

Въ галереѣ имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.
7—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՖՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԿԱՉԻՆՆԵՐ
Գալլերեում կայ ջուր, գազի լուսավորութիւն և հեռագրական կայարան:
7—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ

ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկաներ, ԿԱԿԱՍ, բրինձ, ԱՄԱՆԵՂԵՆ, բոխիներ, թասեր, երես լուսնալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (суджы), մատուցարաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԻԱՆԱԿՆԵՐ, գրայներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, սյրածներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԿՈՒՍ, արիւ, պարուսին, թաշկինակներ, երեսորիներ, կրօնկա, գուլաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՑՆ, խերես, կօնեակ և այլն: ԹԷՑ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԻԸ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գանել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵՐԲԵՏ մազնեզիա, խնոր ՄԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, կարբոնան ԹՕՆԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկրողներ համար, պարսկական փոշի:

42—100

Գուրու եկաւ մամուլի տակից

Ս Ո Ւ Ա Կ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, ՓՈՓՈԽԱԾ, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երկերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր ԵՐԳԵՐ, հատորներ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆՆԵՐ և ԱՐՁԱԿ գրուածներ:

Վաճառվում է. ԹԻՖԼԻՍ՝ Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում, ԵՐԵՒԱՆ՝ պ. Արզար Գուրաբերանցի խանութում, ԲԱԿՈՒՄ՝ պ. պ. Գրիգոր Վրլարեանցի և Ս. Տէր-ՕՏանեանցի խանութներում: Օտարաքաղաքացիները կարող են դառնալ ԲԱԿՈՒ Նոյնպէս «ՍՈՒԱԿԻ» խմբագրահրատարակչին այս հասցեով. Авакы Лазаревичу Григоріанцу, въ Баку.

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլ: Աւագ Գրիգորեանց: 5—5

ՀԷՆՑ ԻՍԿՈՑՆ ՍՏԱՑՎԵԼ ԵՆ

մեծ քանակութեամբ հրացաններ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, փամփուշներ, ԹԷՑ առաջին տեսակի, բոխիներ և այլն: ԶՈԿ ԲՕՐ (choke bore) ՀՐԱՑԱՆՆԵՐ George Dau-ի գործարանից 120 ռ., ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ 11 ռուբլուց, 700 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—40 ռուբլ: Ծախվում է նոյնպէս պարսկան կիսագնով և սյրածներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ: 7—12

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գ. ան օֆսկայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՅԻՑԻ փողոցը № 11. փօստատան ետեւի քուչան: Ընդունվում են ամեն լիզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԵՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՑՅԻՒ Զպլած մաքուր թղթի վրա, գիրքը բարկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրավաճառանոցում», «Կովկասեան գրավաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Եահիսեանցի, Բոզար ջեանցի, Հովեանցի ծխախոտի մագազիններում: Գինն է 1 ռուբլ 20 կօպ:

ԵՂԱՐԲ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ

ԱՌԵԻՏԻՐԱԿԱՆ ՏԵԻՑ

Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Գրասենակը կու գնեցի կամըջի վրա, Կ. Ս. Պօպովի տանը: Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆիլմայի ԹԷՑԻ առևտուրի համար բաց արինք նորերում նոր խանութներ և հետևեալ քաղաքներում: ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրովսկի փողոցի վրա, սեփական տանի ԹԻՖԼԻՉՈՒՄ—Գոյովնսկի պրոսպեկտի վրա, Միրիմանեան: տան: ՄԷՎԱՍՏՕՊՈԼՈՒՄ—Բոյլոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կօզէն վաճառականի տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ և ԿԻԷՎՈՒՄ—Թէյն որ առած է ֆունտերի, կէֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր զիտաւոր պահեստի խանութից, որ գտնվում է Մասկայում, Կրասնոսելսկի փողոցի վրա, սեփական տան:

5—30

ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ (աճողներ և բազմաթիւ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍՏԵՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.
49—150

Ա Ջ Դ

Նորհասկալութեամբ կը ծանուցանենք թէ հետեալ նուիրատուութիւնն ընդունած ենք ի նպատակ Միացեալ ընկերութեանց:

- 1) «Թերձէման Էֆքեար» պատ. լրագրոյ խմբագրութեան 116 դասեկան 15 փարայ. հարկը տան և վեց զահեկան արծաթ և տան և հինգ փարայ, ծախուած թերթերու վրայէն:
- 2) Մի քանի վանեցի բեռնակիրներու կողմէն մի օրինակ Մասիս, ձեռամբ Պ. Մ. Պոլրուպեանի:
- 3) Նոր Գուրայի առաջնորդ Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոսի յանձնարարութեամբ, արժ. Տէր-Վայստան Տէր-Բարդեան, մեծ. Պ. Գ. Ազամեանց և Պ. Յ. Գրիգորեան ի նպատակ Միացեալ ընկերութեանց յիշեալ քաղաքի մէջ հանդանակութեան մը ձեռնարկած են, որոյ շուտ արդիւնք 256 1/2 զրանի փոխարէն ստացանք ստ 10. տան Օսմանեան ոսկի և կէս ոսկի պարսկական: Ի դիմաց Միացեալ-ընկերութեանց Տնօրէն ժողովոյ Ատենայեան Չերապ 1—1

Հրատարակութեամբ Ներսիս Սիւննեանց լոյս տեսաւ զերմանացի բժիշկ Նրէրբի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքոյի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կօպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ.» Тройцкѣй пер. типографіа Вартамянца, въ Тифлисъ.

Ա Ջ Դ

Միացեալ ընկերութեանց տեսչութեան յանձնուած կորայ Ս. Գանիէլ վանքի գարգացման համար մի ցուով 10 յիմու կօփեր, և մի արուով 6 ռուսական ձիեր հարկաւոր լինելով, ընկերութեան նիւթական փիճակի անձկութեանը պատճառաւ՝ կեդրոնական ժողովը իւր վերջին նստին մէջ Տնօրէն ժողովոյ յանձնարարեց ազգայնաց առաջածեւունութեանը դիմել, յիշեալ անասունները ամբողջապէս կամ մասամբ հայթայթելու և Միացեալ ընկերութեանց նուիրելու համար:

Հայաստանի տնտեսական փիճակի բարւոյնմանը նպաստող այս ձեռնարկը երկրին հողագործական անասնոց տեսակն ազնուացնելու օգուտն ևս ունենալով, Տնօրէն ժողովը կը յուսայ թէ ընկերութեան հրաւերն անկելի չը պիտի մնայ:

Ի դիմաց Միացեալ ընկերութեանց Տնօրէն ժողովոյ Ատենայեան Մ. Չերապ 2—3

ԵՐԳՎԵԱԼ ՀԱՐԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԶԵՄԵՍՈՎ

տեղափոխեց իր բնակարանը Արսենաւոյ փողոց «Կրուժոկի» շինութեան ետեւ, Գարբուճովի տանը: 1—5 (1)

ԳՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԳԻՆՍԿԻ

տեղափոխեց իր բնակարանը Որլովսկու տանը Կնստիտուտի մօտ: 1—5

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ

պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լու տեսակի ֆունտը 1 ռ. 20 կ. և 2 ռ. և համեմատեան առաջինը 1 ռ. 60 կ. հետ և երկրորդը 3 ռ. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ ԹԷՅ առանց թՂԹԻ և ԱՐՃՃԻ: 27—100